

Ծրագրի անվանումը	«Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր»
Երկիր	Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի համարը	43253
Բիզնես ոլորտ	Մունիցիպալ և բնապահպանական ենթակառուցվածքներ
Պետական/մասնավոր	Պետական
Բնապահպանական դաս	B
Խորհրդի նիստի ամսաթիվը	2013թ. մայիսի 1-ը
Կարգավիճակ	Անցել է կոնցեպտուալ համապատասխանության քննությունը, սպասվում է վերջնական ուսումնասիրություն:

Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման ամսաթիվը.

2013թ. փետրվարի 11-ը

---

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ՝

Յոհան Ֆրեդհոլմ, ծրագրի պատասխանատու  
fredholj@ebrd.com

---

Ծրագրի նկարագիրը

ՎՋԵԲ-ը քննում է «Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրին» աջակցելու հնարավորությունները: ՎՋԵԲ-ը

Հայաստանին կտրամադրի մինչև 7.0 մլն ԱՄՆ դոլար սուվերեն վարկ՝ հետագայում վերավարկավորելու Երևանի Քաղաքապետարանը՝ ջրամատակարարման ծառայությունները բարելավելու նպատակով:

Եվրոպական Ներդրումային Բանկը քննում է 7.0 մլն ԱՄՆ դոլար սուվերեն վարկ տրամադրելու հնարավորությունը՝ ծրագիրը համաֆինանսավորելու նպատակով: ՎԶԵԲ-ը նաև դիմել է ԵՄ Հարևանության ներդրումային գործիքին (ՀՆԳ)՝ ստանալու 7.0 մլն ԱՄՆ դոլար ներդրումային դրամաշնորհի ծրագրի իրականացումն արագացնելու համար, ինչը կօգնի անդրադառնալ ջրամատակարարման և կեղտաջրերի կառավարման հարցերում անհետաձգելի և անհրաժեշտ բարելավումներին: Ներդրումային դրամաշնորհը դեռ ենթակա է վերջնական հաստատման: Սույն ծրագրի ընդհանուր նպատկները հետևյալն են. Երևանում ջրամատակարարման ցանցի վերականգնումն ու սեկտորիզացիան (ջրի տարբեր ճնշումների գոտիների տարանջատումը) և քաղաքում կոյուղու ցանցի ընդլայնումը:

Ջրային համակարգի օպերատորը Երևանում «Երևան Ջուր» ՓԲԸ մասնավոր ընկերությունն է, որը ամբողջությամբ պատկանում է ֆրանսիական *Veolia Environment SA* ընկերությանը, որը գործում է քաղաքապետարանի հետ 10-ամյա վարձակալության պայմանագրի ներքո:

---

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Ծրագիրն ունենալու է հետևյալ ազդեցությունը անցումային շրջանի վրա.

- Հիմնական կոմունալ ծառայությունների տրամադրմանը մասնավոր հատվածի ներգրավման սատարում և
- Շուկայական շրջանակների բարելավում, ուժեղացնելով քաղաքապետարանի՝ մասնավոր օպերատորին վերահսկելու կարողությունը, ինչպես նաև կարգավորող

---

գործառույթի թափանցիկության մեծացում:

---

Հաճախորդը

Հայաստանի Հանրապետություն՝ Երևանի  
Քաղաքապետարանի հետագա  
ենթավարկավորմամբ:

---

ՎԶԵԲ-ի ֆինանսավորում

Մինչև 7.0 մլն ԱՄՆ դոլար սուվերեն վարկ  
Հայաստանի Հանրապետությանը՝ Երևանի  
Քաղաքապետարանը հետագայում  
ենթավարկավորելու նպատակով:

---

Ծրագրի ընդհանուր  
գումարը

Ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 21.94  
մլն ԱՄՆ դոլար, ներառյալ տեխնիկական  
աջակցությունը: ԵՆԲ-ն քննում է ծրագրի  
համաֆինանսավորման հնարավորությունը:  
Ծրագիրը հետագայում  
համաֆինանսավորվելու է միջազգային  
դոնորի կողմից ներդրումային դրամաշնորհի  
օգնությամբ:

---

Բնապահպանական  
ազդեցություն

Պատկանում է B դասին: Ակնկալվում է, որ  
ջրային համակարգի բարելավումը արդյունքում  
կհանգեցնի Երևան քաղաքի համար  
բնապահպանական և սոցիալական  
բարելավումների: Բնապահպանական և  
սոցիալական պահանջներին  
համապատասխանության ստուգումը ներառում  
է հաճախորդի ներկայիս գործառնությունների  
աուդիտ և առաջարկվող ներդրումային  
ծրագրի վերլուծություն: Այս վերլուծությունը  
ներառում է ծրագրի օգուտների գնահատում և  
նրա ակնկալվող համապատասխանությունը  
ՎԶԵԲ-ի՝ Կատարողականի հանդեպ  
պահանջներին, այդ թվում նաև ԵՄ-ի՝ ջրի  
որակի ստանդարտներին:

---

Տեխնիկական աջակցություն Սույն ծրագրի մաս են կազմում տեխնիկական աջակցության («ՏԱ») հետևյալ առաջադրանքները.

Նախքան վարկի ստորագրումը.

SU 1: Իրագործելիության ուսումնասիրություն. Ֆինանսական, տեխնիկական, իրավաբանական և բնապահպանական ուսումնասիրության պատրաստում, ներառյալ առաջարկվող ներդրման տնտեսական շահութաբերության վերլուծություն, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական գործողությունների պլան: Խորհրդատուները նաև կգնահատեն Քաղաքապետարանի և Ընկերության ինստիտուցիոնալ կարողությունները՝ որոշելու, կա արդյոք կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտություն: (210,000 եվրո Չեխիայի Հանրապետության կառավարության կողմից):

Վարկի ստորագրումից հետո.

SU 2: Ծրագրի իրականացման աջակցություն: Միջազգային խորհրդատուները պետք է աջակցեն ծրագրի իրականացման գրասենյակին ինժեներական նախագծման, գնումների, մրցույթների նախապատրաստման և գնահատման, պայմանագրերի կնքման և կառավարման, ֆինանսական վերահսկման, ծրագրի կառավարման և հաշվետվությունների պատրաստման հարցերում: Առաջարկվում է տրամադրել ( 500,000 եվրո [~ 670 000 ԱՄՆ դոլար] միջազգային դոնորի կամ ՎՋԵԲ-ի՝ Վաղ անցումային երկրների բազմադոնոր հիմնադրամի կամ Բաժնետերերի հատուկ հիմնադրամի կողմից):

---

Գնումների  
մրցույթների

կամ Այցելել ք ՎՋԵԲ-ի գնումների էջը

---

հնարավորություններ.

Տեղեկատվություն.

Հեռ.՝ +44 20 7338 6794, Ֆաքս՝ +44 20 7338 7472

Էլ.փոստ՝ [procurement@ebrd.com](mailto:procurement@ebrd.com)

---

Ընդհանուր  
տեղեկատվություն

Գնումներին չառնչվող տեղեկատվություն  
ՎՋԵԲ-ի ծրագրերի մասին.

Հեռ.՝ +44 20 7338 7168; Ֆաքս՝ +44 20 7338 7380

Էլ.փոստ՝ [projectenquiries@ebrd.com](mailto:projectenquiries@ebrd.com)

---

Հանրային տեղեկատվական  
քաղաքականություն

Հանրային տեղեկատվական  
քաղաքականությունը ի ցույց է դնում, թե  
ինչպես է ՎՋԵԲ-ը ներկայացնում  
տեղեկատվությունը և խորհրդակցում  
շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի ավելի  
բարձրացնի իր ռազմավարության,  
քաղաքականության և գործունեության  
վերաբերյալ իրազեկումը:

Հանրային տեղեկատվական  
քաղաքականության տեքստին ծանոթանալու  
համար այցելեք.  
<http://www.ebrd.com/about/policies/pip/index.htm>

---

Ծրագրերի վերաբերյալ  
Բողոքարկման Մեխանիզմ  
(ԾԲՄ)

ՎՋԵԲ-ը հիմնել է Ծրագրերի վերաբերյալ  
Բողոքարկման Մեխանիզմը (ԾԲՄ), որպեսզի  
այն անցկացնի անկախ ուսումնասիրություն՝  
Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի  
առկա կամ հնարավոր վնասակարության  
մասին անհատներից կամ  
կազմակերպություններից ստացած բողոքների  
վերաբերյալ: ԾԲՄ-ին վերաբերող  
ընթացակարգի օրենքներին կարող եք  
ծանոթանալ.  
<http://www.ebrd.com/about/integrity/irm/about/p/cm.pdf>, իսկ դրա ռուսերեն տարբերակին՝  
<http://www.ebrd.com/about/integrity/irm/about/PCMRulesRussian.pdf>

---

ԾԲՄ-ի ներքո բոլոր բողոքները պետք է

---

ներկայացվեն ՎՋԵԲ-ի ֆինանսավորման վերջին տրանշից ոչ ուշ, քան 12 ամսվա ընթացքում: Կարող եք կապվել ԾԲՄ-ի գործակալի ([pcm@ebrd.com](mailto:pcm@ebrd.com)) կամ ՎՋԵԲ-ի համապատասխան տեղական գրասենյակի հետ, եթե վստահ չեք, թե ինչ ժամանակահատվածում պետք է ներկայացնեք բողոքը:

---

Ծրագրի ամփոփ փաստաթղթերը ստեղծվում են նախքան ՎՋԵԲ-ի Տնօրենների Խորհրդի կողմից կատարվելիք ուսումնասիրությունը: Ծրագրի մանրամասները կարող են փոփոխվել Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակումից հետո: Չի կարելի համարել, որ Ծրագրի ամփոփ փաստաթղթերը ներկայացնում են ՎՋԵԲ-ի պաշտոնական քաղաքականությունը:

Վերջին անգամ թարմացվել է. 2013թ. փետրվարի 11-ին